

կաց բազում տղայք և արար իւր զուլ, նոքար և թոփչի, ինչպէս երբեմն 0սմանցոց Օրխան սուլթանը քրիստոնեաց մանուկներից կազմեց Ենիշէրիների գունդը:

### ՆԵՐՍԻՍԵԱՆ ՇԱՄԿԱԳԻՐ.

Մեր այս 19րդ դարի սկզբում, երբ ամբողջ Եւրոպան դղըրոդում էր Նապոլէոն Ա.-ի ոտքերի տակ, Հայ ազգը՝Պոլսից մինչև Մոսկուա, Աժդարխանից մինչև Պարսկաստան և Տաճկաստան զբաղուած էր Կաթուղիկոսական վէճերով, որ մեր պատմութեան մէջ յայտնի են «Դաւիթ—Դանիէլեան Կոիւ» անուամբ: Այդ կռուի վերաբերութեամբ բացի բերանացի աւանդութիւններից ունինք և շատ մեծ գրաւոր նիւթ, անթիւ նաևակներ՝ թէ մասնաւոր մարդկանց մօտ և թէ դիւտնատանց մէջ, պաշտօնական գրութիւններ և այլն: Այդ նիւթի մի մասը հրատարակուած է արդէն, բայց անտիպ մնացած, մութ և նոյն իսկ գլխովին անձանօթ կէտեր դեռ շատ կան:

Ընթերցողը որպէս զի ըմբռնէ այդ գրաւոր փաստերի հրատարակութեան և մշակման կարեւորութիւնը, պէտք է յիշե որ Դաւիթ—Դանիէլեան կռիւը լոկ պարսկական բռնութեանց, պատիժների. ծեծ ու բանտի և սպանութեանց պայքար չէր, այլ դարագլուխ մեր նոր պատմութեան, մի ահագին վէճ երկու կռուսակցութեան մէջ, որին մասնակցում էին ոչ միայն բոլոր Հայ ազգը, այլ և մեզ տիրող երեք մեծ պետութիւնները: Ամենամեծ գործողն էր այդ բոլոր եղելութեանց ընթացքում ներսէս աշտարակցին, որի կողմը (Դանիէլեան) և վերջի վերջոյ տանում է յաղթանակը: Էջմիածինը աւերուեց այդ կռիւների ժամանակ, կողոպտուեց, միաբանները ցրուեցան, շատերը ծեծուեցան, կաթուղիկոսները կրեցին բանդ և պատիժ, տեսակ տեսակ անպատւութիւններ, պարսկական ճաշակով: Կուսակցութիւնները չէին խնայում ամեն ճիգ և ջանք հակառակորդներին որսալու, թակարդի մէջ ձգելու, լրտեսելու և վնասելու համար:

Եթէ մարդկային կեանքն անգամ ապահովի չէր, ուր մնաց

նոտմակների գուլտնիքը և ընդհանրապէս զրաւոր յարաբերութիւնները։ Տիրող կողմը բռնուում էր հակոռակորդների գրերը, բաց անում առանց որ և է խղճահարութեան և պարունակութիւնները իմանում։ Պատիժները թափւում էին անձրեւի նըման։ Միւս կողմից լուելն էլ անկարելի էր։ Էջմիածնից դուրս եղած կամ պարսպի մէջ փակուած կուսակիցները միմեանցից պէտք է տեղեկութիւն, խորհսւրդ և օգնութիւն ստանային։ Այս նպատակի համար էլ գործ էին դնում ամեն միջոց։ Նոյն իսկ վանքից և յաղթող հակառակորդների ճանկերից փախչելու փորձեր եղան։

Ահա այսպիսի մի նեղ ժամանակ հնարուեց այն ծածկագրութիւնը, որի բանակին գտնելը մեզ յաջողուեց և որի մասին խօսելու ենք ներքեռում։

Պ. Աղէքսանդր Երիցեան իր գրած «Ներսիսի կենսագրութեան» (1877, Թիֆլիզ) մէջ ասումէ.

«Թէև լսած էինք այս մասին (ծածկագրի), բայց մեզ չէ պատահած տեսնել այդ գրութիւնները։ Հանգուցեալ Մսերեանց Մսեր մագիստրոսի «Պատմութիւն Կաթուղիկոսաց Էջմիածնի 1762—1831» գրքի մէջ (եր. 65) այս մասին տեղեկանում ենք, որ ըստ վկայութեան Մեծ. Պ. Զայրմայր Մսերեանի, Էջմիածի մէջ մինչև հիմայ գտնեում են Դաւթեան և Դանիէլեան կուսակցութեանց թղթակցութիւնները։ Ընդ միմեանաւ մանաւանդ ընդ Ներսիսի վարդապետի, գաղտնածածուկ իմն և նորահնար նշանագրովք։ որոց ընթերցանութեան բանալին 1862 թւին գտած է սրբազան Գաբրիէլ Այվազեան Արքեպիսկոպոսը։ Այս նշանագրերից մէկ թերթը, որը որ կարդացուած է, ներկայացնումէ մի անսուրագիւր նամակ, որ Դանիէլէ ծորին անձիւնելից մէլու գրած է առ Ներսէս նամակը սկսուում այսպէս։ «Ներսէս վարդապետ հոգւոյս հատոր»։ Այս նշանագրերի հրատարակութիւնը ցանկալի է ոչ միայն իւր բոլիանդակութեամբ, այլև և նորա համար, որ (իմանանք թէ) գարուս սկիզբներում, այն խուար և տգէտ ժամանակներում Առիայի մի անկիւնի մէջ միերկու հայ վարդապետաց սրամնութիւնը հարկից որ աստիճանի զարգացած էր և թէ ինչ մտքերը որ տեռակ նշանագրերով էին արտոյայտում։»

Առ այս ծածկագրերի մասին առաջին տիգամ լսեցի Նամա-

խում 1879—80 թուին։ Գերապատիւ Թաղէսս Խպիսկոպոս (այժմ Արքեպիսկոպոս) Զիւնականը՝ որ թեմակալն էր, խօսելով այդ ծածկագրերի մասին, ցոյց տուեց ինձ իւր մօտ գըտնուած երկու օրինակը, որ ինքն իրրև հնութեանց սիրող պահպանում՝ էր ամենայն հոգածութեամբ։ Ընթերցանութեան մի քանի անգամ արած փորձերո ինձ չյաջողեց։ Այդ տարին էլ վախճանուեց Գեր, Այլազեան։ Միւս կողմից աւելորդ էլ էր Գեր. Այլազեանին դիմելը, քանի որ Գերապատիւ Թաղէսս Եղիսկոպոսը հաւաստում էր, որ իւր մօտ գանուած օրին աշներն եղել են Այլազեանի մօտ, բայց չեն վերծանուել։ Ուրեմն և շատ դժուար է բացադրել Պ. Զ. Մսերեանցի հաւաստածը՝ թէ Գեր. Այլազ. Եղիսկոպոսը վերծանել է այդ ծածկագրերը։ Գեր. Այլազեան Արքեպիսկոպոսը կենդանի էր դեռ այդ ժամանակ և անշուշտ կարդացած կլինէր թէ Մսերեանցի և թէ Պ. Երիցեանի գրածները և զարմանալի է, որ ոչ մի կերպով պատասխանած չէ։ Գեր. Այլազեան քանիքարաթագոյցներից չէր որ գտածը պահէր և չյանձնէր տպագրութեան կամ Թիֆիլում ցոյց չտուր այնչափ հետաքրքրուողներին, Վերջապէս Գեր Այլազեան եթէ կարդացած էր այդ ծածկագրերով գրուած մի նամակ, այնուշետե առանց ո՞լ և դժուարութեան, մի քանի բոպէի մէջ, ինչպէս պիտի տեսնենք ներքեւում, կարող պիտի լինէր վերծանել և նոյն գրութեամբ ուրիշ նամակներ։ Նա տեսել էր Գեր. Թաղէսս Արքեպիսկոպոսի մօտ գտնուած երկու օրինակ ծածկագրերը, որ և առանց կարդալու վերագրածել էր։ Խսկ այն միակ թերթը, որ իրը թէ 1862 թուին կարդացուել է՝ եղել է անսպասագիր և գրուած Դանիէլ Տօդիկ անջնունէր։ Տօդիկ անջնունէր այսինքն երկու բան, որ միասին չէին կարող լինել։ Եթէ անստորագիր էր, ուրեմն և ո՞րտեղից և կամ ինչպէս իմացան, որ գրողը Դանիէլ Տօդիկ անջնունէր։ Է։ Խսկ թէ ծածկագրերը գործ էրն ածում միմիայն Դանիէլեան կուսակիցները, այդ արդէն մակարերութեան կարօտութիւն չունի և չունէր։ Երկու կուսակցութիւնն էլ եթէ ծանօթ լինէին ծածկագրերին, այն ժամանակ այլ ևս ծածկագիր չէր լինիլ, այլ մանկական մի խաղ, ինչպէս տեսնում ենք հին ձեռագրերի և արձանագրութեանց մէջ։ գալուղանագիր, կէտագիր, պատուագիր են. ևլն։

Բայց Ներսիսին և իւր կուսակիցներին հարկաւոր էր մի ծածկագիր, որ անվերծանելի լինէր գաղտնիքը չգիտցողներին: Ամեն օր դէպքերը անպակտու էին և նամակները բռնւում էին, ուստի և յոյսը միմիայն ծածկագրի անընթառնելի լինելուն վրայ էր: Նոյնպէս անհրաժեշտ էր որ այդ ծածկագրերը լինէին նոր բան, որովհետև եթէ հին գրքերից կամ վարդապետներից սովորած բան լինէր, կարող էին ուրիշներն էլ, հակառակորդներն էլ գիտենալ: Ուստի և մենք ենթադրում ենք ամենայն իրաւումի որ այս դարի հէնց սկզբին, կամ մի երկու տարի առաջ, հաւրուած պէտք է լինէին այդ ծածկագրերը և հաւանականաբար Ներսիսի, իբրև ամենասրամիտ և գործունեայ, միանգամայն խորամանկ և սաստիկ հաստատակամ մարդու, ձեռամբ: Այս իսկ պատճառաւ մենք այդ գրութեանը տուինք Ներսիսին ծագիւագիր անունը:

Մեր մօտ գտնուած (Գեր. Թագէոս արքեպիսկոպոսի) երկու օրինակ ծածկագիր նամակները, ինչպէս և հաւանականաբար 1862 թուին Այվաղեանի տեսածը, ուղղուած են Ներսիսին և կրում են սովորական, մեսրովքեան տառերով հասցէ՛ք ձեռս Ներսիս վարդապետ սիրական: Ժամանեսի: «Հասանի պա . . . որ Աստուած սիրողն ի Տրապը . . . հասցնէ հայրա . . . ձեռովն . . . Երեխ հանգուցեալ Այվաղեանի 1862 ին տեսածն էլ կրում էր «Ներսիս վարդապետ հոգւոյս հատոր. Հասցէն կամ վերնագիրը, «ուշրահան դառներով»: Սովորական տառերով ենք ասում, որովհետև եթէ այդ չորս բառը ծածկագրով գրուած և վերծանուած լինէին, մնացածն էլ, և եղած բոլոր ծածկագիր նամակները կարդացուած կլինէին:

Այսպէս կամ այնպէս. մեր նապատակը չէ Հանգուցեալ Այվաղեանի մասին յշտածը հերքել գրապէս, այլ յոյց տալ, որ հաւանականութիւնից զուրկ է Պ. Զարմայր Մսերեանցի հաւաստածը, և եթէ նոյն իսկ Գեր. Այվաղեան գտած է եղել Ներսիսեան ծածկագրերի բանալին, այդ գիւտը մեղ հասած չէր և կորած մեղ համար:

Սրանից մի քանի եօթնեակ առաջ գտնուելով մի քանի հարց հետ Գեր. Թագ. Արքեպիսկոպոսի մօտ, իոնք բացուեց նորից

ծածկագրերի մասին, և նորին թարձր. Սրբազ. բարեհաճեց ցոյց տալ մեղիւր մօտ գտնուած օրինակներից մին: Ես 7—8 տարուց յետոյ կրկին տեսնում էի ալդ ծածկագիրը և լսում նորա անվերծանելի լինելու մասին: Յիշուեց նաև Հանգ. Այլազեանի արած փորձը և անյաջողութիւնը: Խնդրեցի մի քանի օրով ծածկագիրն ինձ յանձնել ուսումնասիրելու: Ոչ մի-այն շրջապատողներս, այլ և ես էլ յոյս յունէի յաջողութեան:

Մի շաբաթ չանցած այդ ծածկագրերի գաղանիքն արդէն լուծուած էր: Ահա թէ ինչպէս.

Ուսումնասիրելու առած ծածկագիրս գրուած էր գեղնած, փոքր ինչ կապուտին զարնող թղթի երկայն կտորի վրայ, որի լայնութիւնը  $12\frac{1}{2}$  սանտիմէտր, իսկ երկայնութիւնը մօտ 31 սանտ. էր: Մի ծայրում կրումէր ներսիսի հասցէն, ինչպէս վերեւում դրինք և կարմիր կնքամոմի հետքեր: Զկար ոչ վերնագիր, ոչ ստորագրութիւն, ոչ կանոնաւոր կետադրութիւն, ինչպէս լինումէ սովորական նամակներում: Գրաւածի սկզբը գրաւածի սկզբը:

Ներսիսի և նորա ժամանակից գործողների, մասնաւորապէս Ռէթէոս Եպիսկոպոսի և Մանուէլի անուններն որոնելը ի զուր անցաւ: Եւ այս տեսակ ենթագրութիւնները ոչ մի հետեւանքի չհասցրին:

Ամբողջ գրուածքը բազկացած էր 68 տողից որ և նոյնութեամբ դնում ենք վերծանեալ օրինակին մէջ:

Փոքր ի շատէ գաղափար տալու համար ընթերցողին, դնում ենք նամակի սկզբից 11 տող (տես միւս երեսում):

Այս տեսակ վերծանութեան փորձերում, որ երկրորդ անգամն էր պատահում ինձ, այն հետեւանքին էի հասել, որ յաջողութիւնը կախուած է Ենթադրութիւնների ծիլը պրամաբանական լինելուց: Եթէ գրաւուել գիւրին և հեշտ, շուտով պտուղ խոստացող վարկածներով, անցուշտ կմնլորուի մարդ և կարծելով մի քանի բառ լուծած լինել, բոլորովին կանգ կառնէ անկարելիութեան առաջ:

Առաջին տրամաբանական հարցումը որին պէտք էր պատասխան գտնել՝ էր. ի՞նչ լեզուով է գրուած ծածկագիրը:

Մեր գարի սկզբում ընդհանրութեան մատչելի լեզուն էր միմիայն հայերէնը և մասամբ Ատրպատականի թուրքերէնը

ԿԵՎԱԿԱՆ ՀԱՅՈՒ ՎԵ ԱՐ ՑԵՐ  
 ԵՐԱՐԺԻ ԼԵ ԱԿԱԿԻ ԽԵՐ ԲՐՈՒ  
 ԱԵՐ ԹԵ ԽԵՐ ԿԼ ԼԻ ԲՐԸ ԻՐ  
 ԽԱ ՊԱ ԼԻ ԵՔ ԼՊ Ր ԿԵՐ Ի ԽԼԵՐ  
 Ի-Ը ՃԵԶ ՊԵՐ ԼՈՒ ԲԵՇ ԱԿԵՐ  
 Բ-Ե Ի Ք Ք Ջ Ի Ր Հ Ե Լ Ի Կ Ե Ք Բ Ա  
 Ա Կ Վ Ի Ր Ի Վ Ն Լ Պ Ե Լ Ի Կ Ե Ք Բ Ա  
 Ա Կ Վ Ի Ր Ի Վ Ն Լ Պ Ե Լ Ի Կ Ե Ք Բ Ա

Եջմիածնի վանականները շատ և շատ պատճառներով հաւա-  
 նական էր որ լաւ չէին տիրապետում վերջին բարբառին, սա-  
 կաւ բացառութեամբ։ Ուստի և ամեն հանգամանք աչքի առաջ  
 բերելով, կարելի էր գրեթէ անսխալ ենթսդրել. ա) "որ զը-  
 րուածքի լեզուն հայերէն է։ Պէտք էր այժմ իմանալ թէ իւրա-  
 քանչիւր բառ առանձին նշանագիր ունէր, թէ՝ սովորական  
 գրութեան նման, իւրաքանչիւր գիր—իւր առանձին նշանը։

Այս երկու ենթադրութեանց առաջինը չէր կարող լինի,  
 որովհետև այս գէպը ում գրուածքը պէտք է լինէր շատ աւելի  
 կարճ, ամէն նշանագիր մէ բար լինէլ։ Մտքերի արտայայտութիւ-  
 նը կլինէր շատ գժուար, հոլովների և խոնարհումների անկա-

րելիութիւն, միով բանիւ չինական աշխատանք։ Այդ տեսակ ծածկագրի հմտանալն էլ երկար տարիների և տաժանակիր պարապմունքի գործ։ Ոիւս կողմից մեր հին գրքերի, ձեռագրերի մէջ գործ ածուած այս ձեի (մի նշանագիրը—մի բառ) 200—300 նշաններից և ոչ մէկի նմանը գտնուումէր այս ծածկագրում։ Ուրեմն և Պ. Երիցեանի իմանալ ցանկացածը թէ «ինչ ու ինչ մաքեր որ տեսակ նշանագրերով էին արտայայտուում» պէտք էր իրեւ անտեղի մի կողմ ձգել։ Թէև հարկաւոր է աւելացնել, որ բառեր և «Նկատույն Գլւեր նշանագրելու միտքը», որչափ էլ մեզ համար անհեթեթ երեխ, նոյնչափ համապատասխան և մօտիկ պէտք է լինէր նախնեաց մոտածութեան եղանակին, որոնք արդէն սովոր էին նշանագիր բառերով եթէ ոչ ծածկագրել, գոնէ սղել, պատուել և տեղ վաստակելու համար համառօտել իւրեանց գրուածքը։ Այսպիսով հասնում ենք մեր երկրորդ ենթագրութեանը։

Այս ծածկագրի մէջ իւրաքանչիւր գլւ (և ոչ թէ բառ) իւր նշանագիրն ունի։

Այժմ գալիս ենք դժուարագոյն հարցմանը, որի պարզելուց կախուած է և ամբողջ խնդրի լուծումը։ Արդեօք իւրաքանչիր գիր իւր սեպհական ճյ նշանագիրն ունէր, թէ ըստ աւելացն, նայելով թէ գիրը բառէ կամ բառվ և կամ՝ ամբողջ հարաբեծի մէջ քանիերորդն է, և ըստ այդմ՝ զանազան նշանագրերով է արտայայտուած։ Ուրիշ խօսքով. մեր ծածկագիրն արդեօք մեռոպեան գրերի լոկ փոխանակութիւն է ուրիշ նշաններով, թէ կայ և մի երկրորդ տարր, ծածկագրութիւնն աւելի բարդող որ և է գրքի հատուածի կամ թուերի գումարում՝ կամ հանում աւելացնելով ծածկագրին։

Նորագոյն ծածկագրութեանց, որոց մասին և այստեղ կանգառու միտք չունինք, քիչ թէ շատ ծանօթ ընթերցողը գիւրաւ կըմբռնէ այս մեր վերջին հարցման չափազանց կարեորութիւնը և միանգամայն նորա մասին որ և է շատ կամ սակաւ հաւանական վճիռ տալու կամ ենթագրութիւն կազմելու գժուարութիւնը։

Ուստի և դիմեցի անուզդակի միջոցի. ընդօրինակելով հաշուեցի ամբողջ ծածկագրի մէջ եղած նշանագրերը և ստացայ 44 հատ նշան, որոնք և ծածկագրի այրուբենն էին լինելու։ Մի

քանի անգամ ամբողջ գրութիւնն արտագրելով և գրուածքի ձեխն ընտելանալով նկատեցի, որ այդ 44 նշանագրից մի քանի սը կրկին են՝ կցուած երկու գիր, ինչպէս 5 դ տողի 5 դ նշանը։ Այդ տեսակ կից գրերը դուրս ձգելով կազմած այբուբենիցո, մնաց 38 տառ—գրեթէ նոյնութեամբ սովորական այբուբենի (39) թիւը։ Այս և եղաւ առաջին նշոյլը, որ պիտի առաջնորդէր ծածկագրի գաղտնիքը լուսաւորելու։

Այս թուի վրայ հիմնուելով կարելի է ենթադրել, որ ծածկագիրը սովորական այբբենի պարզ էսիանակունիւն էր, մանաւանդ՝ գարի սկզբում բարդ էսիանակունիւնը ծածկագիր, նոյն իսկ լուսաւորեալ երկներում, գժուար էր ենթադրել, ուր մնաց մեր մօտ։ Ուստի և աւելի խրթնութեանց մէջ մտնելուց առաջ պէտք էր ընդունել այս երրորդ ենթադրութիւնը. գ) գրերի պարզ փոխանակութիւն էր մեր ծածկագիրը. այն է՝ մի գիրը ունէր միայն մի նշանագիր։

Ուրեմն և պէտք էր փորձել իմանալ վերջապէս թէ ինչ գիր Բնչ նշանով էր արտայայտուած։

Վերջին գործողութեանը չհասած համառօտենք մեր վերի ենթադրութիւնները. ա) ծածկագիրը հայերէն լեզուով է թ) ոչ թէ բառերը, այլ գրերն են նշանագրուած և գ) մի գիրն ունի մի նշանագիր միայն։

Իւրաքանչիւր ծածկագրեալ նշանի համապատասխան տառը գտնելու համար շատ միջոցներ կան, քանի որ ծածկագրի լեզուն ենթադրուած է։

Հայերէնի մէջ ամենից շատ հանդիպող գրերն են ա, ա, և ն։ Այս երեքից այբը և ոն բառերի վերջում շատ սակաւ են պատահում, մինչդեռ նուն՝ ընդհակառակը։ Ուստի և յաճախագոյն պատահած նշաններից երկուսը ենթադրեցի այբ և նու։ Ընդօրինակեցի բոլոր կարճ բառերը, երկու գրով, երեք գրով, կամ կրկնուած գրով, այն է այն բազմագիր բառերը, որոց մէջ մի և նոյն նշանագիրը երկու կամ երեք անգամ էր պատահում։ Յաճախ պատահած մէագլէր բառը ենթադրեցի և կամ է։ Շատ փորձերից յետոյ, առանց շփոթուելու անյաշողութիւնից և մահաւանդ առանց կպչելու այս կտմ այն ենթադրութեանը,

աչքիս ընկաւ իւր յատուկ կազմութեամբ եօթներորդ տողի  
(տես ծած. օրին. ) վերջին բառը, որն ըստ լնգեան պէտք է  
լինէր երեք բառից՝ առաջինը երեք գրով, երկրորդը միագիր,  
և երրորդը առաջինի կրկնութիւն։ Այդպիսի որոշակի կազ-  
մութեամբ մի բառ հայերէնի մէջ կարող էր լինել. « շատ և  
շատ » կամ « այլ և այլ »։ Սակայն վերի ենթադրութեամբ այ-  
բը մեզ յայտնի էր և այդ եօթներորդ տողի վերջին բառում  
չըկար մեր ենթադրած այբը. պէտք էր որոնել ուրիշ յարմա-  
րագոյն բառ։ « Շատ և շատ » ի փոխանակ ենթադրեցի « իսկ և  
իսկ », « ո՞ւ և իսկ և իսկ նուածէն բանալին »։

Եթէ « իսկ և իսկ » ուղիղ էր, տասներորդ տողում կար մի  
բառ մեր ենթադրած այբով և ինի, սէ, կեն տառերով, որ և  
կարդացւում էր « սասուիկ »։ Կէտը նշանակում է անծանօթ-  
նշանագիր — որ լինելու էր՝ տիւն՝ « սաստիկ »։ Այս ենթադրու-  
թեամբ՝ վերեւում մի քանի անդամ պատահած եռագիր բառը  
կարդացւում է՝ « ստա », այն է՝ « ըստա »։ Այսպիսով մեզ ծանօթ-  
են այժմն Ֆիւնայ հաստատող ենթադրութեամբ ա, ն, ի, ս, կ,  
և, ո, ը՝ ութը գիրը։ Կծիկն սկսաւ քանդուիլ։ Դժուարու-  
թիւնը լուծուած էր։ Հետզհետէ գտնուեցան այբուբենի միւս  
բոլոր գրերը. պակասում էր ֆէն, այն էլ երկրորդ ծածկա-  
գիր նամակից դուրս եկաւ « Թիֆլիզոյ » (Թիֆլիսից) բառում։

Ահա բոլոր նշանագրերը, թարգմանուած սոլորական այբենով.

(Տես միւս երեսում)

Այս այբբենով իւրաքանչիւր ոք կարող է առանց մեծ դըժ-  
ուարութեան կարդալ ներսիսեան ծածկագրի ամեն օրինակ։  
Ես խստանում եմ ամեն այդ ծածկագրերից ունեցողներին,  
եթէ լնգեանք դժուարանան՝ կարդալ և վերադարձնել — եթէ  
ինձ ուղարկեն իրենց ունեցածը, և վերջապէս հրատարակու-  
թեան յանձնելով մեր գտածը, յուսով եմ ամենքին միջոց  
տուած լինել անձամբ կատարելու նոյնը, ազատելով կորստից  
այս հազուագիւտ պատմական նշխարները։

Մինօդի արխիւտում ինձ դէռ չյաջողուեց գտնել սյս ծած-  
կագրից։ Երկու երեք օրինակ ունի Գեր. Սարգիս Եպիսկոպոս,  
անդամ Մինօդի, որ նոյնպէս սիրող է հնութեանց և որ ան-  
շուշտ չի զլանայ մեր ընթերցողներին իւր ունեցածը։ Լսում

$\mathcal{F}$	= $\alpha$	$\mathcal{P}$	= $\beta$	$\mathcal{O}$	= $\gamma$	$\mathcal{R}$	= $\delta$
$\mathcal{D}$	= $\mathcal{K}$	$\mathcal{S}$	= $\zeta$	$\mathcal{C}$	= $\Sigma$	$\mathcal{A}$	= $\wedge$
$\mathcal{V}$	= $\mathcal{T}$	$\mathcal{H}$	= $\mathcal{A}$	$\mathcal{T}$	= $\mathcal{Z}$	$\mathcal{N}$	= $\mathcal{Y}$
$\mathcal{Y}$	= $\mathcal{K}$	$\mathcal{T}$	= $\mathcal{S}$	$\mathcal{L}$	= $\mathcal{N}$	$\mathcal{K}$	= $\mathcal{U}$
$\mathcal{Q}$	= $\mathcal{F}$	$\mathcal{L}$	= $\mathcal{H}$	$\mathcal{V}$	= $\mathcal{E}$	$\mathcal{I}$	= $\mathcal{X}$
$\mathcal{Y}$	= $\mathcal{Z}$	$\mathcal{F}$	= $\mathcal{K}$	$\mathcal{G}$	= $\mathcal{S}$	$\mathcal{J}$	= $\mathcal{X}$
$\mathcal{G}$	= $\mathcal{F}$	$\mathcal{H}$	= $\mathcal{Z}$	$\mathcal{C}$	= $\mathcal{Q}$	$\mathcal{P}$	= $\mathcal{U}$
$\mathcal{R}$	= $\mathcal{L}$	$\mathcal{X}$	= $\mathcal{Z}$	$\mathcal{G}$	= $\mathcal{W}$	$\mathcal{O}$	= $\mathcal{O}$
$\mathcal{H}$	= $\mathcal{P}$	$\mathcal{J}$	= $\mathcal{M}$	$\mathcal{C}$	= $\mathcal{U}$	$\mathcal{O}$	= $\mathcal{S}$
$\mathcal{O}$	= $\mathcal{Z}$	$\mathcal{P}$	= $\mathcal{V}$	$\mathcal{Z}$	= $\mathcal{W}$	$-$	= $-$

Ինք որ մի քանի օրինակ էլ գտնւում են Ներսէս Ե. ի ազգականների մօտ:

Այս ծածկագրեալ նամակների ժողովածուն, եթէ յաջողի մեզ կազմել, կլինի հազուագիւտ և թանկագին պատմական հաւաստիք: Այս նամակներով կծանօթանանք Ներսիսի կուսակցութեան նէր+ին և գաղպնաժանու-է գործողու-նէանց: Եւ եթէ մինոր բան էլ չաւելանայ ազգային պատմութեան, գոնէ սա մեծ նիւթ կլինի մեր ազգային «բարուց» պատմութեան (Sitten Geschichte) համար, որ դեռ ամեննեին չէ ուսումնասիրուած:

#### ԱՌԱՋԻՆ ՆԱՄԱԿ

«Հոգւոյս ցանկալւոյ, աչացս լցոյս,  
Ներսէս րարունւոյդ մատու-  
ցանեմ ողջոյն գրկախառ համ-  
բուրիւ: Աէր իմ: զպատուէրսն, որ  
ընդ էվճիւարցի Մանուկին, գի-  
տակ եղաք և ըստ յարգւոյդ և մեր

բնիկ մտաց կամեցաք իսկ և իսկ  
կատարել, բայց ըստ մեր պայմա-  
նի և ժամադրեալ ժամու ոչ եկին։  
Գիտացաք որ վս (վասն) սաստիկ երկիւղին  
չկարողացան գալ։ \*)

Լուր հոգի իմ, մեր անունաս (անվնաս) հասանիլն առ ցանկալիդ պյա-  
պէս պարտիս առնել։ Կոչել ի Քօրօն բնակել (բնակեալ) գոջի (թերես  
Դօչի) սէսն և յանձնել նմա դ (4) քաջ անձինք և բ (2) ազնիւ ձիս,  
զի ինքն Շամտինի տղայի ըռհամեն (ըռահամ) է, կարող է աներկիւղ գալ  
շրջել և ի Սահամայ գիւղօրայսն և այսու ձևով ի ձեռու բերել զՄելիք  
Մինասն և ի ձեռու նորին ծանուցանել (ծանուցանել) մեղ և մեք ի պայ-  
մանադրեալ ժամում ի գիշերին ելցուք ի պարսպէն և ի լուսանալն առա-  
ւոտուն ազ (աստուծով) գտցուք զՁոռայ գեատուկի։

Այսպէս պարտիս պատուիրել և ամի (ամենայնի) զգոյժ (զդոյշ) ի-  
նիլ. զի դա զիս և ես զդա լաւ գիտեմք. քաջ է և հմուտ ամ (ամենայն)  
ձանապարհացն լեր անհոգ։

Եւ զայս ինչ կարծիս ունիմ ի գեօջի ուսէն, հրամանքդ ևս խորհեան և  
ապա կատարումն տուր բանիցն, զի դա բարեկամ և ծանօտ (ծանօթ) է  
փաշայի Գէորգին. մի գուցէ ծանուցէ նմա և մեղ վնաս լիցի. Յայսմանէ  
միամիտ լեր և ապա խօսիր. Յայս կարծեացս եթէ անհոգացիս միւպն  
ամ (ամենայն) կարողանաս ի գլուխ բերել։

Եթէ ըստ այսմ լինիցի՝ Աքրահամն Աժտարիսանցի և Յակոբն Պոլսեցի  
թարց կարծեաց ընդ իս բերելոց եմ. Տիրցւ (տիրացու) Բարսեղն լինի թէ  
զկնի քանի աւուրց յշեսցուք։

Ո՞վ ջանիկ, զարմանամ թէ զիանդ մաժէք (մաշէք) զոգիս մեր, օրէ օր  
ձգելով զօծումն Սրբազն Տեառն (Դանիելի) մերոյ, որոյ մաքոր (մա-  
քուր) գարշապարացն համբոյրս մատուցանեմ թաղձեալ սրտիս. և միջա-  
կտուրս առնէք զմերայինան. Թէ այսպէս և թէ այնպէս. թողլով զա (զա-  
մենայն կամ զառաջին) պատճառսն, զանացէք զայդ կատարել։

Վասն անցից և որպիսութեանց ոչինչ ունիմ գրելի, գիտելի է և լինե-  
լոց է, միայն թէ զԱնտօն վարդապետ սիրական եղբօրս եղբայրն յորժամ  
գայցէ յադր (յայդր) ի ինամն ունիցիս։

Առ ձեղ եղեալ եպիսկոպոս հարցու՝ կլկլ բարայիս, Գրիգոր բնիկ սիրել-  
ւոյս, Աւրանցի ցանկալւոյս մաքուր զաջմն համբուրեմ և զանոյշ իսաթրսն  
հարցանեմ. լեր ողջ ի սէր։

Կար” Յով”

(\*) Մինչեւ այստեղ բնադրի տողերի չտափը պահեցինք. ընթերցողին համեմատու-  
թեան դիւրութիւն տալու համար. վերեւում ծածկադրով դրուած օրինակը այս  
11 տողն է։

Ճաճոտն մեր սուրբ աջդ համբուրէ և ասէ. մեռաք պոսէպոս տալով, գրի ի սուրբ աթոռս յամոռու իզ (26)։

Սակայն մեր առաջն նամակի. Այս նամակի գրողն է Յովհաննէս Կարբեցի վարդապետը (յետոյ Կաթուղիկոս): Նամակը գրուած է Էջմիածնում (ի սուրբ աթոռս): Ամիսը և տարեթիւն յայտնի չեն, սակայն իմ կարծիքով ԳրՈՒԹԵԱՆ ՏԱՐԻՆ է 1801 թիւը, իսկ ԱՄԻՍԸ—ՅՈՒՆԻՍ. ուրեմն այս նամակը գրուած է 1801 թ. յունիսի 26ին Էջմիածնից Ուչքիլիսէ (երեք խորան կամ Ս. Յովհաննու վանք): Կարբեցու լնքնագիր կենսագրութիւնից (անտիպ) որ գրուած է 1802ին Թիֆլիսում, երեւումէ, որ նա մօտ 45 տարեկան հասակում 1802ին Թիֆլիսումն էր և Էջմիածին չէր վերադառնում Դաւթի երկիւղից: Դաւթիթը 1801 թ. ապրիլի 28ին կաթուղիկոս օծուեցաւ Էջմիածնում: Ներսէսը Ուչքիլիսէից ճանապարհ ընկաւ, յօգուտ Դանիէլի աշխատելու համար և հասաւ Կ. Պոլիս 1801 յուլիսի 19ին: Ուրեմն այս նամակը գրուած պէտք է լինի 1801 ապրիլ 28ից յետոյ, երբ Կարբեցին դեռ Թիֆլիս չէր փախել, և 1801 յուլիսից առաջ՝ երբ Ներսէսը դեռ Բայազիտ կամ Ուչքիլիսումն էր և Պոլիս չէր գնացել. թուականն ուրեմն հաստատ 1801ն է. մնումէ ամիսը, որ պէտք է լինի կամ մայիսի 26 և կամ յունիսի 26: Մեր կարդացած երկրորդ ծածկագիր նամակից (տես ներքեւում) երեւումէ, որ Ռէթէոս Եպիսկոպոսին Թիֆլիսից խորհուրդ էին տալիս Կարբեցուն ընկերներով Էջմիածնից վախցնել Ներսիսի մօտ Ուչքիլիսէ. «իսկ Աքրահամ գրէ և զայս թէ Յովհաննէսն իւր համախոհիւքն առ քեզ յըզեցուք» (Բ. նամակ): Այս երկրորդ նամակի թուականն է յունիսի 12 (անշուշտ 1801): Ուրեմն և մեր կարդացած առաջին նամակը, որ երկրորդից յետոյ է ժամանակով, գրուած է ոչ թէ մայիսի, այլ յունիսի 26ին: Նամակի մէջ հանդիպող յատակ անունների մեծ մասը կարելի է մեկնաբանել: Ներսէսը պիտի կանչէր Գօրուն գիւղի (Զօռի միւս կողմը Մուսունի մօտ) Գօջի կամ Ղոջի ռէսին (տանուտէր) որ Նամոնի տղայի (հաւանօրէն քուրդ իշխան) հողումն էր բնակւում (ըռահաթ—հարկատու, հպատակ) և կարող էր Սահաթայ (Սահաթլար) գիւղերը գալ շըջել և Մելիք Մինասի հետ տեսակցել: Մելիք Մինասը շատ յայտնի էր այն ժամանակը և սորա մասին Սինօ-

դի արխիւում էլ շատ տեղեկութիւնք կան. Բլուր գիւղիցն էր, ուր և մինչև այժմն յիշում են նորան: Եվնիլարը Մարգարայ իջեանից ոչ հեռու, Երասխի մօտ հայաբնակ գիւղ է և ուխտատեղի: Զօռայ Գեադուկը (լեռնային անցք, ուրեալ) գըտնւումէ սահմանում, Բայազիտի ճանապարհին:

Աժդարխանցի Աբրահամը և Պոլսեցի Յակովը, որ նարց (առանց) կարծեաց Կարբեցին Հետը փախցնելու տանելու էր Եջմիածնից, երեսումէ որ կուսակից և հոգեկից ընկերներ էին: Երկումն էլ չկարողացան Կարբեցու հետ գոնէ Թիֆլիս փախցել: 1804ին հանդիպում ենք մենք նորանց Եջմիածնում, ուր և յունիսի 20ին, Հուկիսիմեանց տօնի օրը, վանքի պարսպից Ռուսաց և Պարսից պատերազմին մտիկ անելիս գնդակահար սպանուեցան: Աժտարխանցի Աբրահամը, արդէն սարկաւագ էր և անուանուում էր Տրդատ, իսկ Յակովը վարդապետ էր և կրում էր «Վարժապետ» մականունը: Սարկաւագութեան ժամանակ անուն փոխելը եթէ ոչ միշտ գործածական, սակայն անսովոր գէպք չէ և Յակովը ընկերակցութիւնը ապացոյց է մեր ենթադրութեան հաւանականութեանը՝ որ Աբրահամն ու Տրդատը մի և նոյն անձնաւորութիւնն է: Տիրացու Բարսեղը յետոյ նշանաւոր եպիսկոպոս դարձաւ: Ներսիսի մօտ գըտնուած եպիսկոպոսներին բարե ուղարկելիս Կարբեցին յիշումէ Կլկլ բաբայ, որ է Կըլկըլ մականուանեալ Յովհաննէս եպիսկոպոսը: Աւրանցի ցանկալիս՝ Աւրան Մշու գաւառում մեծ հայաբնակ գիւղ է, Աւրանցի ցանկալին է ուրեմն Աւրանցի Յովհաննէս եպիսկոպոսը: (Տես այս երկու Յովհաննէսների Նվիրեմին գրած նամակը 1802 յունիս 1. Ներներ Ներներ Ե. Կ. Կ. Կ. ) Փաշայի Գէորգը երեսումէ որ Դաւթի կուսակիցներիցն էր թերեւս և ազգական: Անտօն վարդապետ սիրական եղբայրը, Գրիգոր բնիկ սիրելին և Ճանճոտը թէ ովքեր են ինձ յայտնի չէ: Պոսէպոս տալ այն ժամանակուայ լեզուով նշանակումէ թ պատերի տակ կուչ եկած ման գալ: Զարմանալի չէ որ Դաւթի մօտ Եջմիածնում փակուած՝ պոսէպոս տալով էին ման գալիս:

Այս առաջին նամակի ծածկագրի ձեւը շատ վարժ և գեղեցիկ է, մինչդեռ երկրորդինը անվարժ է շատ և վրիտակներով մկը:

## ԵՐԿՐՈՐԴԻ ՆԱԾԱԿ

(Մածկագրով) «ի ձեռ ներսէս վարդապետին։  
ի Ռւշքիլիսէ ի ձեռ ներսէս վարդապետին հասցէ։

Ներսէս վարդապետ ազնիւ եղբայր իմ։

Յուկա (Յունիս) ամսոյս է (7) Դալթիս մարդիք ի Թիֆլիզ եկին թղթովք Աօլօմնին, Կարապետին, Արրահամին և Մաղաքիլի Յովհաննէսին։ Գրեալ են թէ ժողովեցաք առ Կաւալիցիկին, Խօսեաք վասն քո և նա ասաց թէ զորն կամիք նա է ձեր կաթուղիկոսն։ և ըստ այսմ ասաց թի (թէ) յառաւօտուն բազմութեամբ գնալ առ ինքն թի (թէ) առ Կնօրինն գնասցուք։ Գնացեալ ի յառաւօտն քո բանն գլուխ հան։ իսկ Արդահամն կարճ գրէ թէ՝ կոնդակն փողոցսն կարդացաք և խստացան (խստացան) մոմն տալ և անունդ գ (3) ժամն յիշեցաք։ Զիք—Կարապետն գրէ թէ՝ մեզ Կնօրինն խոստացել է Ղուամաթն բերել տալ և այլ այսպիսիք։

Իսկ Արրահամ գրէ և զայս թէ Յովհաննէսն իւր համախոհիւքն առ քեզ յղեսցուք։

Արդ թէպէտ երկի թէ փարայի տուզախ է, այլ մի գուցէ շփոթն տեսացէ։ այդի թուղթս առ մեծամեծն թէ Հայոց և թէ Ռուսաց (Ռուսաց) և օրինակս Պօլսոյ բանից շուտով առաքեսջիք։ Թէպէտ այս բանից լրովքն յուսակտուր էաք, մինչ օրինակ Մանուկի գրոյն տեսի, յիրակի նորոգեցան կեանք մեր։

Մի բազմակընիք ևս որ յղեալ եմք չգիտեմք էհաս թէ որպէտ եղև գրես։

Կամիմք առ Կայսրն և առ Սինօթն Ռուսաց ևս շինել և յղել առ Եփրեմ հայր սուրբն։ Եթէ պապշամառ (պատշամառ) է համարիք առ ձեզ առաքեմք, յղել ձեր թղթովքն։

Մեռոնի իւղի պատրաստութիւն տեսէք և այս նիւթից հոգսն ևս հոգացէք։ իսկ մասցելոց բանքն զօլայ է, և Պօլսոյ և կափ (կամ) ի Կարնոյ կարելի է թէ գտանի բերել տայցէք։

Պալասան 150 տրամ, միայսալի որ է զուգի ձէթ՝ 30 տրամ, ամբար 5 արէմ, Մուշէ 5 արէմ, լատան 15 արէմ։ Այսոքիկ գուք բերել տուք։ իսկ միւսքն յետոյ ևս հոգացուի։

Արդ սա (Դակիթ) որպէտ թէ զօրութիւն առեալ մինչև 60 թուղթս դրէ ի Թիլֆիզ և ի կողմն Հաշտարիսանու և առ կայսն (կայսրն)։ Լեռ ողջ ի Տէր ի սէր, Ռէթէոս։

Թուղթքդ հասին առիս։ մանսէրից միոյ հասանիլն իմացան, յետինս ոչ։ Յունիսի ժք (1801) ի սուրբ Էջմիածին։

Մանօնս-Ռին Երկրորդ նամակն Այս նամակի գրող Ռէթէոս եպիսկոպոսը շատ յայտնի է իրքեւ ներոիսի կուսակից և խնամի։ Ներսիոի քոյր Դայիան էն Վաղարշապատում ամուսնացած

Եր Ռէթէոսի եղբօր՝ Յովհաննէսի հետ։ Խշան Սոլոման Արդութեանը Յովհակի արքեպիսկոպոսի յանկարծահաս մահից յետոյ յայտնի է որ Դաւթի կուսակիցներից էր, որոնք և Թիֆլիսում աշխատում էին Դաւթի համար։ Նամակից երեսումէ որ Թիֆլիզիք խոստացել են (երեք գաղարացրել էին) էջմիածնի Տաճարում վառելիք մոմը տալ, ինչպէս և մինչև օրս էլ տալիս են, և Դաւթի անունը երեք եկեղեցում յիշել են։ Գրումէ մեռնի պատրաստութիւն տեսնել, որ Դանիէլը կաթուղիկոսանալով Նքեք—խորսնում մեռոն օրհնէ, ինչպէս և եղաւ։ Դիւմիւշխանցի Մանուէլ Ալթունեան կամ Շահինեան, Ներսիսիսի ընկեր և ջերմ Դանիէլեան, այն ժամանակ գտնւում էր Պոլսում։ Իսկ ինչ վերաբերումէ այն բանին թէ էջմիածնից կամենում են կայսեր և Ռուսաց Ախնօդը խնդրագիր ուղարկել, այդ էլ կատարուեցաւ 1802 ին։ Ուղարկուեցաւ 3 օրինակ։ մինը կայսեր, միւոը Ախնօդին և երրորդը Աքրոսի մետրապոլիտին։ Կառալցին է այն ժամանակուայ Վրաստանի Ռուս կառավարիչ Կովալենսկին, որ Դաւթի կուսակից էր ինչպէս և Ռուսաց գեսպանը Պոլսում՝ Թամարան։ մինչդեռ եփրեմ Արքեպիսկոպոսը և Լազարեանները ջերմ Դանիէլեաններ էին։ Կուտէնն է այն ժամանակ Կովկասում եղած ռուս զօրաց ընդհանուր հրամանատար Կնորրինգը։

ՄԻԱԲԱՆ

## Մ Ի Լ Տ Ո Ն

ԵՒ ՆՈՐԱ

• ԿՈՐՈՒՍՏ ԴՐԱԽՏԻ,

( Հոդ Տէնի )

Միհթարեանց բազմավաստակ հայրերը Հայոց ազդի լուսաւորութեան մեծապէս սատարել են նաև այնու, որ օտարազգի ընակիր դասական մատենագրութեանց թարգմանութիւններին վաղուց ձեռնարկելով՝ շարունակ և անխոտոր այդ ճանապարհով են ընթացել։ Նորա մինչ ցայսօր չեն դադարում արդարացնել Գեօթէի այն ասութիւնը, թէ թարգմանիչը միջնորդ է հա-